ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

✉ *3301 հ. Կապան, Մ. Սրեփանյանի 3/2,* ☎ 0285-27509

ԴԴԱ-17-Ե-25448

<<22>> 12 2025թ.

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան.

Ձեզ եմ ներկայացնում Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի միջև 22.12.2025թ-ին կնքված թիվ 2 լրացուցիչ համաձայնագրի լուսապատճենը / թիվ PDU-126-01-25 պայմանագրի շրջանակում / և խնդրում Ձեր միջնորդությունը՝ դրական եզրակացության մեջ փոփոխություն կատարելու նպատակով:

Առդիր՝ «1» թերթ

Հարգանքով՝

Աշխատակազմի ղեկավար Գարիկ Հովհաննիսյան

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-126-01-25
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան **22.12.2025թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2025թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/261-25 Լիազորագրի հիման վրա, և ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Գարիկ Հովհաննիսյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-126-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 22 232 300 (քսաներկու միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 21 398 340 (քսանմեկ միլիոն երեք հարյուր իննսունութ հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-126-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝	**Պատվիրատու՝**
«Հայփոստ» ՓԲԸ ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5 ՀՎՀՀ՝ 02507464 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 1930003703156000 Հեռ.՝ (010) 544-444	Սյունիքի մարզի առաջին ատյանի ԸԻԴ ք. Կապան, Մելիք Ստեփանյան 3/2 ՀՎՀՀ՝ 02583241 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՀ՝ 900311001169 Հեռ.՝ (0285) 5-22-69
Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար՝	Աշխատակազմի ղեկավար՝
Գուրգեն Բաղդասարյան ---------- /ստորագրություն/	Գարիկ Հովհաննիսյան---------- /ստորագրություն/